ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Մարտունի **21-ը դեկտեմբերի 2023 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2023 թվականի դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստը:Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամները: Բացակա էին Անդրանիկ Գրիգորյանը, Արարատ Խաչատրյանը, Նաղաշ Հակոբյանը, Մարինա Հովեյանը, Լուսինե Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարները և աշխատակազմի բաժինների պետերը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի հինգերորդ նստաշրջանի չորրորդ հերթական նիստի օրակարգը՝

1) Համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների (հողամասերի) սահմաններին կից Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Աստղաձոր, Վարդենիկ, Արծվանիստ, Ծովինար, Գեղհովիտ, Վարդաձոր, Վաղաշեն բնակավայրերի բնակիչների կողմից իրենց հողամասերում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացմանը համաձայնություն տալու մասին.

2) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին.

3) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

4) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքային հիմնարկների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար հավելավճարներ սահմանելու մասին.

6) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում տեղական տուրքերի, վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի բնակիչ Ժենյա Դավիթի Վարդանյանին դրամական օգնություն տրամադրելու մասին.

8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունու մանկական արվեստի դպրոցի շենքի 1-ին հարկից 37.42 քմ տարածքն անհատույց օգտագործման իրավունքով վեց ամիս ժամկետով «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց փոխհատուցում կատարելու մասին.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Չի քվեարկել Կարինե Հովհաննիսյանը:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 256-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ) ՍԱՀՄԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ԱՍՏՂԱՁՈՐ, ՎԱՐԴԵՆԻԿ, ԱՐԾՎԱՆԻՍՏ, ԾՈՎԻՆԱՐ, ԳԵՂՀՈՎԻՏ, ՎԱՐԴԱՁՈՐ, ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի №04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-23 «Քաղաքաշինություն. քաղաքային, և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 128-րդ կետը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն՝

1) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Հակոբիկ Ընձայի Հակոբյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 5-րդ փողոց, թիվ 67 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

2) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Ռաֆիկ Վաչականի Թաթոյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 4-րդ փողոց, թիվ 49 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

3) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Ավետիք Խորենի Գորանցյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վ. Դուրան թաղամասի 8-րդ փողոց, թիվ 11 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

4) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Մամիկոն Սուրենի Գրիգորյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 7-րդ փողոց, թիվ 38 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

5) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Ժիրայր Ասլանի Ասատրյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 8-րդ փողոց, թիվ 43 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

6) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Արայիկ Գագիկի Մինասյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 4-րդ փողոց, թիվ 2 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

7) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Մխիթար Շվերնիկի Ավետիսյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 5-րդ փողոց, թիվ 26 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

8) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Սայաթ-Նովա Գերասիմի Գասպարյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 5-րդ փողոց, թիվ 39 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

9) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Դավիթ Մուքաելի Ինջոյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Սուրբ Խաչ թաղամասի 3-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

10) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Գնել Ռազմիկի Արզումանյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամասի 3-րդ փողոց, թիվ 52 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

11) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Մելքոն Մկրտչի Ճռիկյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դուրան թաղամասի 1-ին փողոց, թիվ 1/1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

12) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Իշխան Վոլոդիայի Հովնիկյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 7-րդ փողոց, թիվ 13 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

13) Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Թեհմինե Ռազմիկի Գասպարյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 3-րդ փողոց, թիվ 15 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

14) Մարտունի համայնքի Վերին Գետաշեն բնակավայրի բնակիչ Վարուժան Մյասնիկի Հարեյանի կողմից Վերին Գետաշեն բնակավայրի Ա թաղամասի 4-րդ փողոց, թիվ 2/4 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

15) Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի բնակիչ Ավետիք Վանուշի Բարսեղյանի կողմից Աստղաձոր բնակավայրի 57-րդ փողոց, թիվ 30 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

16) Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի բնակիչ Խաչիկ Աբովի Օհանյանի կողմից Վարդենիկ բնակավայրի 53-րդ փողոց, թիվ 6 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

17) Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի բնակիչ Ալֆենդր Մանվելի Գևորգյանի կողմից Արծվանիստ բնակավայրի 6-րդ փողոց, թիվ 35 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

18) Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի բնակիչ Արարատ Ջիվանի Թորոսյանի կողմից Ծովինար բնակավայրի 2-րդ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 34 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

19) Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի բնակիչ Միեր Սերյոժայի Տեր-Սահակյանի կողմից Ծովինար բնակավայրի 5-րդ թաղամաս, 3-րդ փողոց, թիվ 50 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինությունն օրինականացնելու համար.

20) Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի բնակիչ Հերմինե Հրանտի Հարությունյանի կողմից Ծովինար բնակավայրի 1-ին թաղամաս, 6-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար.

21) Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի բնակիչ Հրանտ Սուրիկի Տոնեյանի կողմից Ծակքար բնակավայրի 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 6 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

22) Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի բնակիչ Կոմիտաս Ռազմիկի Գրեյանի կողմից Գեղհովիտ բնակավայրի 9-րդ փողոց, թիվ 30 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու համար.

23) Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի բնակիչ Լամարա Վանիկի Ղազարյանի կողմից Վարդաձոր բնակավայրի 38-րդ փողոց, թիվ 87 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած ավտոտնակն օրինականացնելու համար.

24) Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի բնակիչ Լազր Կամոյի Հովհաննիսյանի կողմից Վաղաշեն բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող իր բնակելի կառուցապատման հողամասի սահմանագծով համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի (հողամասի) սահմանին կից ինքնակամ կառուցած բնակելի տունն օրինականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 257-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 585000 (հինգ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 258-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2024 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն հավելված №1-ի:
2. 2024 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված №2-ի:
3. Առաջարկել Մարտունի համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 259-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2024 թվականի համար հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքային ենթակայության հիմնարկների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1-41 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-16 Դեմ-6 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 260-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների համար սահմանել հավելավճար՝ նրանց պաշտոնային դրույքաչափի 6 (վեց) տոկոսի չափով:
2. Համայնքային ծառայողին տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան շնորհելու դեպքում համայնքային ծառայողի համար հաշվարկվում է սույն որոշման 1-ին կետում նշված չափով հավելավճար՝ այդ իրավունքի ծագմանը հաջորդող ամսվա 1-ից:
3. Համայնքային ծառայության Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար սահմանել հավելավճար՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-16 Դեմ-5 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 261-Ա/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-12-րդ և 16-րդ հոդվածների պահանջներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայսատանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը 2024 թվականի համար՝ համաձայն հավելված №1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը 2024 թվականի համար՝ համաձայն հավելված №2-ի:
3. Համայնքային ենթակայության ուսումնական հաստատություններում ուսման և ծնողների կողմից կատարվող վճարներից հարյուր տոկոսով ազատել՝
   3.1. Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաներին.

3.2. երկկողմանի ծնողազուրկ երեխաներին:

4. Համայնքային ենթակայության ուսումնական հաստատություններում ուսման և ծնողների կողմից կատարվող վճարներից հիսուն տոկոսով ազատել՝
   4.1. միակողմանի ծնողազուրկ երեխաներին.
   4.2. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող երեխաներին.
   4.3. հաշմանդամություն ունեցող երեխաներին.
   4.4. միևնույն ուսումնական հաստատություն նույն ընտանիքից երկու և ավելի երեխաներ հաճախելու դեպքում.
   4.5. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և համայնքում բնակվող երեխաներին:

5. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված զեղչերից (արտոնություններից) օգտվելու կիրառման իրավունքը համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում վերապահել համայնքի ղեկավարին:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 262-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԺԵՆՅԱ ԴԱՎԻԹԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2023 թվականի բյուջեից Մարտունի քաղաքի բնակիչ Ժենյա Դավիթի Վարդանյանին տրամադրել 100000 (հարյուր հազար) դրամ դրամական օգնություն՝ գարնանային հորդառատ անձրևների պատճառով նրա բնակելի տան փուլ եկած պատը վերանորոգելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 263-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 264-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱԹՈՒԼ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Մարտունի համայնքի 2023 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից 75724.0 հազար դրամ հատկացնել համայնքի 2023 թվականի բյուջեի ֆոնդային մաս՝ ներքոնշյալ ոլորտներում 2024 թվականին Մարտունի համայնքում սուբվենցիոն ծրագրերով կատարվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու և փորձաքննության եզրակացություններ տրամադրելու նպատակով՝
   1) «Ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի 5134 հոդվածին 28612.0 հազար դրամ.
   2) «Գազաֆիկացում» նախահաշվի 5134 հոդվածին 2555.0 հազար դրամ.
   3) «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 5134 հոդվածին 3750.0 հազար դրամ.
   4) «Մարտունու բնակարանային շինարարություն» նախահաշվի 5134 հոդվածին 2117.0 հազար դրամ.
   5) «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 5134 հոդվածին 11853.0 հազար դրամ.
   6) «Մշակույթի տներ և ակումբներ» նախահաշվի 5134 հոդվածին 2400.0 հազար դրամ և 5112 հոդվածին 900.0 հազար դրամ՝ Վարդաձորի մշակույթի կենտրոնի տանիքի վերանորոգման նպատակով.
   7) «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 5134 հոդվածին 23537.0 հազար դրամ:
2. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 5111 հոդվածից պակասեցնել 20000.0 հազար դրամ, 5112 հոդվածից պակասեցնել 1900.0 հազար դրամ, իսկ «Փողոցների լուսավորում» նախահաշվի 5112 հոդվածից 19000.0 հազար դրամ և ավելացնել՝
   1) «Ոռոգման համակարգերի վերանորոգում և շահագործում» նախահաշվի 5112 հոդվածին 8100.0 հազար դրամ, 5113 հոդվածին 1000.0 հազար դրամ.

2) «Ջրամատակարարում և ջրահեռացում» նախահաշվի 5112 հոդվածին 12300.0 հազար դրամ.
3) «Մարտունու բնակարանային շինարարություն» նախահաշվի 5113 հոդվածին 1800.0 հազար դրամ.
4) «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի 5113 հոդվածին 1500.0 հազար դրամ.
5) «Ջրամատակարարում և ջրահեռացում» նախահաշվի 5134 հոդվածին 13700.0 հազար դրամ.
6) «Փողոցների լուսավորում» նախահաշվի 5134 հոդվածին 2500.0 հազար դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Մեխակ Հակոբյանը:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 265-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻՑ 37.42 ՔՄ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԵՑ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունու մանկական արվեստի դպրոցի շենքի 1-ին հարկից երեք սենյակ՝ ընդհանուր 37.42 քմ մակերեսով, անհատույց օգտագործման իրավունքով վեց ամիս ժամկետով տրամադրել «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ Մարտունի համայնքում «Տուժած բնակչության կենսական ապահովման և դիմակայության ամրապնդմանն ուղղված աջակցություն դեպքի վարման և հոգեբանական առաջին օգնության միջոցով» ծրագրի իրականացման նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկությանը չի մասնակցել Հակոբ Բարոյանը:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 266-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու անդամներ Հայկ Ալեքսանյանի, Տիգրան Ալեքսանյանի, Տարոն Արշակյանի, Հակոբ Բարոյանի, Արա Գասպարյանի, Անդրանիկ Գրիգորյանի, Պապ Դանիելյանի, Օլգա Դավթյանի, Կորյուն Խաչատրյանի, Մեխակ Հակոբյանի, Նաղաշ Հակոբյանի, Անդրանիկ Հարությունյանի, Սվետլանա Հարությունյանի, Մարինա Հովեյանի, Լիանա Հովհաննիսյանի, Կարինե Հովհաննիսյանի, Գոհար Մանուկյանի, Սյուզաննա Մարկարյանի, Անդրանիկ Մովսիսյանի, Սեդրակ Սահակյանի, Արմեն Սեդրակյանի, Լուսինե Վարդանյանի, Հակոբ Վարդանյանի դիմումները՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. 2023 թվականի համար կատարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու անդամների՝ իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց փոխհատուցում՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 267-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի օրը սահմանել 2024 թվականի փետրվարի 29-ին, ժամը 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 268-Ա/

Ավագանու անդամներ՝

ՀԱՅԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՏԱՐՈՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ԲԱՐՈՅԱՆ

ԱՐԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՊ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ՕԼԳԱ ԴԱՎԹՅԱՆ

ԿՈՐՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԽԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՀԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԵԴՐԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՈՆ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ ՄԱՐՏՈՒՆԻ
REPUBLIC OF ARMENIA GEGHARKUNIK REGION MARTUNI MUNICIPALITY

Նիստն արձանագրեց՝ Սվետլանա Հովհաննիսյանը_____